

## Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ-ԶԱՏԻԿ

Ձի՝ խնդրէք զկենդանին ընդ մեռալու.  
չէ՝ տառ, այլ յարեա:  
Ղուկաս, Խթ, 6:

  
 բրան քաղցր հիշողություններ  
 են կապված մեր Տեր Հիսուս  
 Քրիստոսի Ս. Հարության,  
 Զատիկի տոնի հետ: Դեռ երե-  
 խա հասակից, երբ մեզ տոնի ամելի արտա-  
 բին հանդիսավոր արարողությունն ու ժե-  
 սերն էին հետաքրքրում ու խորին տպագլո-  
 րություն թողնում մեր վրա, միշտ սիրելի է  
 հղել այս հրաշափառ տոնը, տոն որ զու-  
 գադիպում է գարնան գալատյանը: Խոտա-  
 շունչ ձմեռվանից հետո, մեծի պահոց ապաշ-  
 խարճության օրերը վերջանալուց գալիս է  
 ցանկալի, ուրախ Մաղկագերդը, գարնան  
 նախակարապետը: Բնությունը թոթափում է  
 խոտաբարոյ ձմեռվա լուծը, հալլում են վեր-  
 ջին ձյուները՝ կարկաչահոս առվակների  
 փոխարկվելով, ձյունասպիտակ սարերը քիշ-  
 քիշ վեր են քաշում իրենց սպիտակ ձյուննե-  
 սավանները, դաշտ ու հովիտ, սար ու ձոր  
 ծածկվում են դալար կանչով, երիներանք՝  
 ծաղկիներով, բողոքում ու ծաղկում են ծա-  
 ռերը: Մարդու հոգին առավել ցնծությամբ՝  
 է լցվում, երբ հեռու հարավից տարափո-  
 խիկ, խարտարդես թշումների երամները  
 գալով, մեր աշխարհը լցնում են իրենց ու-  
 րախ ծլվլոցով ու դաշկալիկներով:

Այնուհետև Մաղկագերդից հետո գալիս  
 են Ավագ շաբթիւ օրերն իրենց խորախոր-  
 շուրդ բովանդակությամբ, կապված մեր Տե-  
 րոց երկրագոր կյանքի վերջին օրերի հետ.  
 — շորեթաբթի ու հինգշաբթի — Հիսուսի  
 մատնությունը, ոտնալուան և խորհրդավոր  
 ընթրիքը, ուրբաթ ու շաբաթ — խաչելությու-  
 նը և թաղումը, կիրակի՝ հրաշափառ Հարու-  
 թյունը:

Անցնում են մեր կյանքի մանկա-պատա-  
 նեկան ուրախ ու անհոգ շրջանները և գալիս  
 են երիտասարդական ու այրական լուրջ և  
 խոհում տարիները: Մենք դարձյալ մեծ ու-  
 րախությամբ տոնում ենք Տիրոջ Ս. Հարու-  
 թյան այս վեհ տոնը, այս անգամ արդեն  
 առավել ուշադրություն դարձնելով տոնի  
 ներքին, իմաստալից բովանդակության, նրա  
 բում, իսկական էության վրա: Խսկ այդ բո-  
 վանդակությունը, էությունը, իր բյուրեղային  
 պարզության մեջ, անշափ վեհ, մշտնշնաւ-  
 կան է ու հարազատ մարդու սրտին ու  
 զգացմունքներին: Հանձին Հիսուսի Հարու-  
 թյան հարություն են առնում ու հավիտե-  
 նականության սեփականություն դառնում  
 այն բղջոր վսեմ գաղափարները, որ քա-  
 ռողել է մեր Տերը ի հակադրություն այն  
 ժամանակիլա հեթանոս աշխարհի, և այդ  
 բղջորի մեջ ամենափափառ օսիրեսցես զընկեր  
 քո իբրև զանձն քոյ: Մերն է իշխում մեր  
 Տեր Հիսուս Քրիստոսի անմահ վարդապե-  
 տության մեջ: Միրո վարդապետությունը հո-  
 յակապորեն արտահայտված ենք տեսնում  
 մեր Տեր Հիսուսի գործունեությունը նկա-  
 րագրող չորս ավետարաններում, իշշակն և  
 Քրիստոսի մեծ աշակերտ Պողոս առաքյալի  
 թղթերում:

Հին հսրայելի Եջովան խիստ էր ու պա-  
 հանջկու, նրա սահմանած օրենքներն ու  
 կանոնները տառացիորեն պաշտոնապես  
 պարտադիր էին ընտրյալ ժողովովի յուրա-  
 քանչյուր անդամի համար: Թերևս զա թե-  
 լագրվում էր այն ժամանակվա գաժան ի-  
 րականության անխոսափելի պահանջներից,  
 թերևս եգիպտական տաժանելի գերությու-

նոր ազատապեմած հրեա ժողովուրդը  
կարիք ուներ ավելի ակնհայտ կերպով, ա-  
վելի խիստ ու պարտապիր օրենքներով և ծե-  
սերով անցրած վելու իրեն շրջապատի կու-  
պաշտ ու հեթանոս ժողովրդից և այս ձեռվ  
մեծ մարգարի Մովսիսի ու ապա նրա հա-  
ջորդ քաջարի զորավար Հեսուս Նավիսակի ա-  
ռաջնորդությամբ նորից տիրանալու իր սի-  
րասում հայրենիքին, Քանանին, մեծ նահա-  
պետների Ավետյաց երկրին: Բայց թերի էր  
հին Խսրայքի կրոնը, նա չէր չերմացնում  
մարդու հոգին, չէր խսում նրա սրտի նուրբ  
զգացումների հետ:

Առավել ևս բիրտ էր այդ ժամանակվա  
տիրապետող կոպապաշտ ու հեթանոս աշ-  
խարհը, լայնածավալ հոռմեական կայսրու-  
թյունը, իր պաշտած կուռքերով ու մեհյան-  
ներով, արյունուղաց կեսարներով ու զորա-  
վարներով, կողոպուտի, կոտորածի ու գե-  
րեվաճառության քատմնելի տեսարաններով,  
զարհուրելի կրկեսներով։ Մարդու հոգին  
բրունում էր այս բոլորից և նա իր միակ  
հաճույքը անվերջ արշավանիների, նվաճում-  
ների, ավարառության ու գերեվարության մեջ  
էր գտնում։ Այդպես էին և Խորացելին ան-  
միշապես շրջապատող մանր ազգերը փղը-  
տացիները, ամաղովտացիները և մյուաները:  
Ի՞նչ պիտի տային զգայուն, աստվածային  
հոգուն այս բիրտ կոպապությունն ու խըս-  
տասրտությունը։

Եվ ահա այսպիսի դաժան իրականության  
պայմաններում, երբ մարդը մարդու համար  
գալլ էր, երբ թույները անխնա հողոտվում  
էին հզորների կողմից և մարդկային ամենանվիրական գաղաքմունքները ունահարվում  
սանձարձակ իշխողների կողմից, քարոզվել  
է սկսում մի նոր, վեճ ու վսեմ գաղափար,  
քրիստոնեական սիրո վարդապետությունը:  
Քրիստոնեական սիրո քարոզն էր դա, որ  
հնչել է սկսում ուժգին— սեր առ Աստուած,  
սեր առ մարդը, սեր առ համայն ընությունը  
իր բոլոր արարածներով հանդերձ: Միրով է  
տոգորված մեր Տիրոջ երկրավոր ողջ գոր-  
ծունեությունը: Հիսուսի քարոզած սիրո  
վարդապետությունը իր սպառիչ ամբողջու-  
թյամբ մենք գտնուած ենք Հովհաննու ավե-  
տարանուած, զարդարված խորհրդավոր ըն-  
թիրիքին Տիրոջ ավանդած վերջին խրատնե-  
րով ու պատվերներով.— «Պատուիրան նոր  
տամ ձեզ, զի սիրեցէք զմիմեանս, որպէս  
սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսցիք զմի-  
մեանս: Ցայսմ գիտացեն ամենենքեան, երէ  
իմ աշակերտ էք»: «Մեծ ևս քան զայս սէր  
ոչ ոք ունի, երէ զանձն իր դիցէ ի վերա-  
բարեկամաց իւրոք» (Հովհ., ԺԴ 34 և ԺԵ  
12): Հուզիչ է մանավանդ տեսարանը, երբ  
Հիսուս Քրիստոս ընթիրից առաջ իր աշ-

կերտների ուռներն է վանում, տալով նրանց ծայրագույն խոնարհության օրինակ, և ապա նոր միայն նրանց հետ սեղան նստում: Այս վերջին անմոռաց պահին ահա մեր Տերը հավիտենական հիշատակ է թողնում իր աշակերտներին ու սրանց միջոցով էլ հաջորդ սերունդներին, պատուարագելով բաղարշ հացով ու անապական գինիով: Այսպես է տեղի ունենում անմահ պատարագի վեհ խորհուրդն առաջին անգամ:

Քրիստոնեական սիրո վեհ վարդապետությունը խորթ էր ապականված քարքերի տեր հօթասոսական աշխարհի համար և նա ծառացավ նրա դեմ, չուզեց ճանաչել ու ընդունել այն վարդապետությունը, որը կոշված էր սկիզբ դնելու մարդկային պատմության մեջ մի նոր դարաշրջանի։ Սակայն անհողողող էր նոր վարդապետության փոքրաթիվ հետևողների կամքը ու անսպառ նրանց եռանդը. նրանք, արհամարհելով մահը, իրենց անձնուրաց քարոզության շնորհիվ, իրենց կյանքի գնով կարողացան հաղթահարել հեթանոս աշխարհի ընդդիմությունը և ամենուրեք տարածել նոր վարդապետության վսեմ գաղափարները. հեթանոս աշխարհը անզոր գտնվեց խեղղելու քրիստոնեական վարդապետության գաղափարները և նրա անդուկ պարագան ու ջղաձգային գալարումներն ավարտվեցին կոտրերի ու մեհյանների կործանմամբ, իսկ նոր վարդապետությունը տարածվեց ամենուրեք:

Նոր վարդապետության կատաղի ու մոլես-  
ռանդ թշնամիներ էին հանդիսանում հատ-  
կապես հրեհ խստասիրոտ դպիիներն ու  
փարիսեցիները, որոնք, իրենց զարած կեղ-  
ծավոր կյանքի համար, անողոք կերպով  
մերկացվել էին Հիսոս Քրիստոսի կողմից:  
Այս մի շարք «վայ»-երը, որոնք այնքան  
գեղեցիկ կերպով, մարդարտի պան շարված  
են Մատթեոսի ավետարանում, ինչպես օ-  
րինակ «Վայ» ձեզ դպրաց և փարիսեցնց  
կեղծաւորաց, զի փակէք զարքայութիւն երկ-  
նից առաջի մարդկան. զուտ ոչ մտանէք և  
որոց մտանենն՝ շտայք բայլ մտանել»,  
«...Առաջնորդի կոյրէ, որ զմժուկու քամէք և  
զուլու կլանէք», «Վայ» ձեզ դպրաց և փա-  
րիսեցնց կեղծաւորաց, զի սրբէք զարտա-  
ժին զրածակին և զսկաւուկին, և ի ներքոյ  
լի են յափշտակութեամբ և անխառնու-  
թեամբ», «Վայ» ձեզ... զի ճման էք գերեզմա-  
նաց բռնոց, որ արտաքոյ երեխն գեղեցիկ,  
և ի ներքոյ լի են ոսկերօն մենուոց և ամե-  
նայն պղծութեամբ: Խոյնակն և զուտ ար-  
տաքոյ երեխ մարդկան արդարք և ի ներքոյ  
լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ»  
(Մատթ. իգ. 13, 24, 25, 27, 28) և այլն,  
վկայում են այդ դասակարգի, հրեհ ժողո-

վըրդի այդ առաջնորդների ամբողջ ապականությունն ու կեղծավորությունը: Եվ ահա նրանք վճռում են վերջ տալ իրենց այլանդակ արարքները մերկացնողի կյանքին: Խարդավանքներից ու ստոր խարեռություններից հետո նրանց հաջողվում է Հիսուսին պոնտացի Պիդատոս դատավորի ձեռքը մատնել, որպիս խոռվարդի, և մահվան դատավճիռ կայացնել տալ նրա նկատմամբ: Եվ Հիսուս խաչվեց Գողգոթայի գագաթին, իր երկու կողմը ունենալով խաչված երկու մահապարտ ավազակներ:

Բայց հնարավո՞ր է արդյոք սպանել Աստծու Որդուն, նրա քարոզած աստվածալին վեհ մտքերը, գաղափարները, կարևի՞ է աշխարհի վրայից վերացնել սերը, գթասըրտությունը, կարեկցությունը, գուրգուրանքը, այսինքն այն ամենը, ինչ որ մարդու, Աստծո պատկերը կրող մարդու, ողջ էությունն է կազմում: Ո՞չ երբեք: Հիսուսի պես անարատ հոգին չէր կարող մահանալ: Նրա մարմինը չէր կարող ապականություն տեսնել, և առա խաչելության երրորդ օրը նա հարություն է առնում ու նրա աշակերտները ամենուրեք տարածում են այս հայտնությունը: Հոգեգալստից անմիշապես հետո, աշակերտները, լցված Ս. Հոգու շնորհներով, երուսաղեմում ու շրջակայքում քարոզում են Հիսուսի Հարության մասին: Իր շուրջը խմբված ժողովրդին դիմելով Պետրոս առաքյալն ասում է: «Չոր Աստուած յարոյց, լուծեալ զերկուս մահու, քանզի ոչ էր հնար

բմբռնել նմա ի նմանէ (ի մահուանէ») (Գործք Առաքելոց, թ 24): Հարուցյալ Հիսուսի հետ միասին անմահ են և նրա բոլոր քարոզությունները:

Հայաստանյաց եկեղեցին, որ հենց քրիստոնեության արշալուսին հաղորդակից եղավ մեր Տիրոջ անմահ գաղափարներին, իր ետ Քրիստոսի երկու հազարամյակի ընթացքում առանձին սիրով ու արարողություններով է մեծարել ու մեծարում է Ս. Հարության տոնը, Զատիկիր: Մեր քաղցրաշունչ շարականները պատշաճ վայելությամբ ու վեհ խոսքերով և պատկերավոր գարմվածքներով են դրվատում այս մեծախորհուրդ ու մեծահանդես տոնը, ինչպես օրինակ՝ «Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ և երկենաւը. Տեղ ամերի խնդութեան հարսն ի յերկրէ, եկեղեցի. օրենքա ի ձայն զեծութեան զԱստուած ք Սիօն»: «Այսօր երեխակի յերկեհց իջեալ տան զաւեխու մարդկան՝ յարեալ խաչելեալն և յարոյց զձեզ ընդ ինքեան»: «Այսօր և մեր զուարեացիակ պայծառացնոր տօնիս. ընդ հաշուութեանն Աստուծոյ միմեանց արկցուի գրեկու սիրով և միարան գոշեցուի՝ Քրիստո յարեալ ի մեռելոց»:

Մենք էլ ողջուկն տանք միմյանց Քրիստոս յարեալ ասելով և սրտանց շանանք մեր ամբողջ կյանքի ընթացքում հավատարիմ մնալ այն բոլոր վսեմ գաղափարներին, որ քարոզեց մեր Տիր Հիսուսը մարդկության նորոգության ու փրկության համար:

